

Որ շեշտակի թագերուն եւ գահերուն վրայ կ'իջներ:
Իրենց ճակտին շողացող երկնային մէ՛ն մի ճաճանջ
Սանձակոտոր եռանդի մը փոխուեցաւ մըրըկայոյ՞գ.
Իրենց մէջ ոսկր ու արիւն դարձաւ ամէն գաղափար.
Եւ այսպէսով մկանունքնուն ամէն մէկ բուռն յաղթանակ
Մէկ հոյակապ յաղթանակն էր մարդկային մեծ Մըտքին:
Երբոր անոնք կ'անցնէին հորիզոնէն արփամուտ,
Աշխարհ վախով եւ յոյսով տեսաւ կարմիր շուքն անոնց.
Եւ արիւնի մէջ մեռնող շողերուն տակ լըռաւետ
Իրենց զէնքերը բահեր կը թըւէին՝ որոնցմով
Խուզարկելու կ'երթային արշալոյսներ նորանոր...
Սակայն հի՞մա. Ա՛հ, հիմա բըռնադատուած են քաշել
Կոյր հըրանօթն՝ որ պիտի վաղն արձակուի կոյրերէ:
Պարանն՝ որ ձիգ կըռնակնէն կաշկանդումով մը կ'անցնի
Կը պըղծէ սուրբ ուսերնին՝ որոնք էին արժանի
Լոկ փառքը կրել մագերնուն արփույն շողով սանտըրուած:
Յուլա՛յ, վե՛ր, վե՛ր. Բայց ահա խրոխտ խոյանքով մը վերջին
Թընդանօ՛թն այն տըղընդեր լերան կատարն հանեցին
Այն թընդանօթն՝ որուն շունչը պիտ' երթայ լափլիզել
Կատաղաշարժ բանակներ, կամ քաղաքներ մարմարէ.
Խաղաղ գիւղեր՝ որ ցանուած բըլուրներու լանջքին վրայ՝
Արեգակին տակ կ'օծուին, կամ լուսնին տակ կ'աղօթեն:
Թիապարտներն աւասիկ հառաչակուլ հեւալով
Լերան վըրայ լուսողող կոթողուեցան գլուխնին վեր.
Իրենց աչքերն, որոնց մէջ արիւննին է խըռնըւեր.
Արեւուն տակ, պըղիւնձին մութ ու կարմիր փայլին պէս,
Ըսկըսան շող մ'արձակել: Անոնք տեսան իրենց շուրջ
Յորիզոններն՝ որոնց վըրայ բերդեր էին կառուցուած,
Պատերազմի ճամբաներ՝ բանակներու իբր ուռկան,
Եւ հասկըցան՝ որ աշխարհն իրենց թողած օրէն վեր
Մընացեր է միշտ գառամ, միշտ մեղքին տակ կորակոր.